Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՌԵԿՏՈՐ

Թիվ 2050-Լ 23.08 2023 թ.

ՀՐԱՄԱՆ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված <<Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան>> հիմնադրամի կանոնադրության 54-րդ կետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Փաստաթղթերի տրամադրման համար սահմանել վճար համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել ռեկտորի 2023 թվականի հունվարի 19-ի 132-Լ հրամանը:
3. Սույն հրամանից բխող անհրաժեշտ գործողությունների կատարումը վերապահել համալսարանի գլխավոր հաշվապահի ժամանակավոր պաշտոնակատար Անահիտ Կարապետյանին:

ՌԵԿՏՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ ՄԱՐԻԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտորի պարտականությունները ժամանակավոր կատարող Մարիաննա Հարությունյան

2023 թ. օգոստոսի 23-ի թիվ 205Ա հրամանի

ՑԱՆԿ

ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐԻ

1. Կորցրած ավարտական փաստաթղթի (դիպլոմ) և/կամ անվան փոփոխման դեպքում ավարտական փաստաթուղթը (դիպլոմ) տրամադրելու համար սահմանել վճար՝ 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ, իսկ ավարտական փաստաթղթի (դիպլոմ) կազմի համար սահմանել վճար՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:
2. Կորցրած, նախկինում չստացած, կրկնակի ավարտական փաստաթղթի (դիպլոմ) հավելվածի և/կամ անվան փոփոխման դեպքում ավարտական փաստաթղթի (դիպլոմ) հավելված տրամադրելու համար սահմանել վճար 20000 (քսան հազար) ՀՀ դրամ:
3. Կորցրած և/կամ անվան փոփոխման դեպքում ակադեմիական տեղեկանք և նախկին նմուշի դիպլոմի հավելվածի տրամադրման համար սահմանել վճար՝ 20000 (քսան հազար) ՀՀ դրամ:
4. Ավարտական փաստաթղթի (դիպլոմ, դիպլոմի հավելված, ակադեմիական տեղեկանք, արխիվային տեղեկանք) վավերացման համար սահմանել վճար՝ 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ:
5. Ավարտած ուսանողների կողմից հայցվող կրթական ծրագրերի նկարագրերի, թեմաների և կրթական վերջնարդյունքների մասին տրամադրվող մանրամասն նկարագիրը հայերեն լեզվով տրամադրելու համար սահմանել 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ, իսկ օտար այլ լեզուներով (անգլերեն, ռուսերեն) 60000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ:
6. Այլ բուհերի և կազմակերպությունների ասպիրանտների և հայցորդների՝

   ա/ ատենախոսության թեմայի հաստատման համար սահմանել վճար՝ 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ.

   բ/ առաջատար կազմակերպության եզրակացության համար սահմանել վճար՝ թեկնածուական ատենախոսության համար 40000 (քառասուն հազար), դոկտորական ատենախոսության համար 65000 (վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ.

   գ/ նախապաշտպանության կազմակերպման և ատենախոսական աշխատանքի եզրակացության ձևակերպման համար (յուրաքանչյուր անգամ) սահմանել վճար՝ թեկնածուական ատենախոսության համար 45000 (քառասունհինգ հազար), դոկտորական ատենախոսության համար՝ 65000 (վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ: